# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 10.03.2017թ. ժ. 10:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Աբրահամյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ.Սաֆարյան, Ա.Մնացականյան, Է.Ղազարյան, Ն.Մուկուչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Վարդանյան

### 1. Բանակցությունների անցկացման մասին

---

**1.1. Բանակցությունների վայրը՝** ք. Երևան, Արգիշտիի փողոց 1, 224/2 սենյակ

1.1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մրցույթի մասնակիցներից ոչ ոք չէր ներկայացել միաժամանակյա բանակցություններին, գնահատող հանձնաժողովը որոշեց անփոփոխ թողնել թիվ 2 արձանագրության արդյունքները:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1.2. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2-րդ չափաբաժնի մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցները, գնահատող հանձնաժողովը որոշեց չկայացած հայտարարել վերը նշված չափաբաժինները՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1.3. Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, ինչպես նաև նույն կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման համար:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Ռ.Աբրահամյան |
| Անդամներ՝ | | Գ.Սաֆարյան |
| | | Ա.Մնացականյան |
| | | Է.Ղազարյան |
| | | Ն.Մուկուչյան |
| Քարտուղար՝ | | |